

*ԵՊՀ-ի Մամուլի պատմության և տեսության  
ամբիոնի հայցորդ Վարդուհի Պետրոսյան*

Լրագրողական էթիկական դաշտը կարգավորող ՀՀ օրենքները

«Մարդիկ քեզանից ճշմարտություն են ակնկալում: Բայց ինչպե՞ս հասնել դրան, եթե վերջինս թաքնված է մարդկային հարաբերությունների խորքում, և դու քո տրամադրության տակ ունես ընդամենը հաշված ժամեր: Ոչ ոք քեզ ուղղություն ցույց չի տա և չի կիսի քեզ վրա դրված պատասխանատվությունը: Յուրաքանչյուր քայլ քո սեփական որոշումն է, ընտրությունը: Եվ դու դա անում ես՝ առաջնորդվելով քո ներքին ձայնով. մի բան, որ դժվար պահին սկսում է ուժգնորեն հնչել քո իսկ հոգում...»:<sup>1</sup>

Դեռևս հին հույն փիլիսոփա Սոկրատեսը, խոսելով «Ներքին ձայն» կոչվածի մասին, այն համարել է մարդու բարոյական հեղինակության ամենաբարձր հատկանիշը:<sup>2</sup> Լրագրողական էթիկայի մասին օրեցօր զարգացող պատկերացումները ի վերջո հանգեցնում են նրան, որ բարոյականությունը ավելի բարդ ֆենոմեն է, քան այն արտահայտված է Սոկրատեսի դատողություններում, թեև ցանկացած պարագայում բարոյականությունը դրսևորվում է մարդու կողմից իր իսկ գործողություններով:

Պատվի, խղճի և պատասխանատվության գիտակցումը մարդկության գոյատևման հիմնական ուղեցույցն է, մի բան, որ պարտադրվում է մեզանից յուրաքանչյուրին իր գործունեության ընթացքում:

---

<sup>1</sup> Г.В. Лазутина, Профессиональная этика журналиста, Москва, 2002, стр.3

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 6

Ժուռնալիստիկան, որ դասվում է ինքնուրույն սոցիալական ինստիտուտների թվին, ունի իր հիմնավորված պատկերացումները բարոյականություն ասվածի մասին, որոնք ամրագրված են միջազգային տարբեր փաստաթղթերում ու կոդեքսներում: Ժուռնալիստական գործունեությունը ինքնին ենթադրում է շոշափել, գործ ունենալ շատերի հետաքրքրությունների հետ, ասել է, թե՛ ընդարձակ լսարանին ներկայացնել կյանքի ամենատարբեր ոլորտներին առնչվող դեպքերն ու իրադարձությունները: Թեմայի ընտրության, աղբյուրների որոնման, փաստերի հավաքման, հրատարակության նպատակի կոնկրետացման, հերոսին կամ իրավիճակը բնութագրելու հարցում այս կամ այն կերպ արտահայտվում է լրագրողի վերաբերմունքը: Բայց նման սուբյեկտիվ վերաբերմունքը լրագրողական էթիկայի առումով ոչ միայն չպետք է շեղի լսարանին երևույթը ճիշտ ընկալելուց, այլև օգնի գնահատել այն:

Այսօր թեև ավելի մեծ ուշադրություն է դարձվում լրագրողի մասնագիտական ու բարոյական նկարագրի վրա (ամրագրված տարբեր երկրների ՁԼՄ-ների կողմից ընդունված էթիկայի վարքականոցներում, այնուամենայնիվ, շատ լրագրողներ, խախտելով էթիկական դրույթներն ու առաջնորդվելով լրատվամիջոցների որդեգրած քաղաքականությամբ (կուսակցական, հանրային, ընդդիմադիր), շարունակում են հասարակությանը տրամադրել ոչ հավաստի, այս կամ այն անհատի, կամ պաշտոնյայի անձնական կյանքը շոշափող սենսացիոն, պատիվն ու արժանապատվությունը վիրավորող նյութեր: Այդպիսի դրսևորումները թեև հատուկ են դեղին ժուռնալիստիկային, բուլվարային մամուլին, ցանկացած երկրում կան պետության կողմից ընդունված օրենքներ՝ նախատեսված սահմանափակելու և միաժամանակ կանխելու նմանատիպ չարաշահումներն ու խախտումները: Այլ կերպ ասած՝ «Այն բոլոր պետությունները, որոնք վավերացրել են խոսքի ազատությունը, լրագրողական էթիկայի փաստաթղթերը, պարտավորվել են իրենց ազգային Սահմանադրություններում ոչ միայն ամրագրել խոսքի ազատության երաշխիքներ, այլև այդ իրավունքի անհրաժեշտ սահմանափակումներ, որովհետև դրանք պետք է անպայմանորեն բխեն օրենքի պահանջներից»:<sup>3</sup>

Մեր հանրապետությունում խոսքի և մամուլի ազատության սահմանափակումները (որի չարաշունչն էլ ինքնին հանգեցնում է բախման) նախ՝ նախատեսվում են երկրի հիմնական օրենքով՝ Սահմանադրությամբ, ապա նոր միայն Քաղաքացիական և Քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածներով ու իրավական այլ ակտերով:

Տեղեկատվության ազատության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի

8-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվում են տեղեկատվության ազատության որոշակի սահմանափակումներ, եթե դա՝

<sup>3</sup> Շ. Դոյդոյան, Սահմանադրությունը մամուլի ազատության երաշխավոր, Երևան, 2001, էջ 38

1. «պարունակում է պետական, ծառայողական, բանկային ,առևտրային գաղտնիք.
2. խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.
3. պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ.
4. բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
5. խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները»<sup>4</sup>:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածը վկայակոչում է .«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր անձնական և ընտանեկան կյանքն անօրինական միջամտությունից , իր պատիվը և բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունք»։ Սահմանադրական այս դրույթը թերևս փորձ է կայունություն հաստատելու պետություն-ՁԼՄ-հասարակություն կառույցի միջև,ասել է,թե՝ ձգտել հասարակությանը հավաստի տեղեկատվություն մատուցել՝ միաժամանակ հարգելով մարդու իրավունքներն ու ներկայացնելով երևույթի թեր և դեմ կողմերը։Հասարակությունը ճշմարտությունը իմանալու ակնկալիքով շատ հաճախ ծանոթանում է այնպիսի մանրամասների, որոնք «փակ» են հանրության համար։ 20-րդ հոդվածում նաև ասվում է.«Արգելվում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը և տարածելը»<sup>5</sup>, այլ կերպ ասած՝ մարդու անձնական կյանքն անձեռնմխելի է։ Հետևաբար, նա իրավունք ունի վերահսկել իր մասին տեղեկությունը, արգելք հանդիսանալ անձնական , ներանձնական բնույթի տեղեկությունների տարածմանը։ Լրագրողական էթիկայի տեսանկյունից՝ ներխուժումը ինչ-որ մեկի անձնական կյանք համարվում է կոպիտ խախտում, քանզի անձնական կյանքի մասին տեղեկատվություն հրապարակելը չի թույլատրվում՝ առանց վերջինիս թույլտվությամբ։ Բացառությամբ այն դեպքերի, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար։

Այսօր շատ լրագրողներ, ընկնելով սենսացիայի հետևից, անտեսում են այն փաստը, թե արդյո՞ք իրենց ունեցած տեղեկությունները ճիշտ են, արդյո՞ք դրանք համապատասխանում են իրականությանը, թե՞ ոչ...

Այդ պատճառով քիչ չեն վիրավորանքի և զրպարտության համար դատական պրոցեսները։ Նշված էթիկական խախտումները կարգավորվում են ՀՀ Քաղաքացիական և Քրական օրենսգրքերի համապատասխան հոդվածներով։ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 19-րդ

<sup>4</sup> ՀՀ տեղեկատվության ազատության մասին օրենքը, էջ 8

<sup>5</sup> ՀՀ Սահմանադրություն,հոդված20,էջ 13

հողվածի համաձայն՝ «Եթե քաղաքացու պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկությունները տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, ապա դրանք պետք է հերքվեն զանգվածային լրատվության նույն միջոցներով»:<sup>6</sup> Հողվածում նաև ասվում է, որ տվյալ քաղաքացին իրավունք ունի իր պատասխանը հրապարակել զանգվածային լրատվության նույն միջոցներում և հերքման հետ միասին պահանջել հատուցելու դրանց տարածմամբ պատճառված վնասները»<sup>6</sup>:

Ուշադիր հետևելով նշված դրույթին՝ պարզ է դառնում, որ խոսքը միայն նյութական վնասի փոխհատուցման մասին է, իսկ բարոյական վնասի մասին օրենսդիրները լռում են: Չէ՞ որ «Ջրպարտության հետևանքով մարդը կարող է կրել հոգեկան տառապանքներ, զայրույթ, ամոթ: Ռուսաստանի Դաշնության Քաղաքացիական օրենսգիրքը, որն ի դեպ Հայաստանի համանուն օրենսգրքի հիմքն է, որոշ դեպքերում նույնիսկ շարադրանքը, նշում է (հողված 115) , որ եթե քաղաքացուն հասցվել է բարոյական վնաս (ֆիզիկական և բարոյական տառապանքներ), դատարանը կարող է դրամական փոխհատուցում գանձել իրավախախտից: Իսկ բարոյական վնասի չափը որոշելիս դատարանը պատժի հիմքում ընդունում է մեղքի չափը, ֆիզիկական և բարոյական տառապանքների մակարդակը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ»<sup>7</sup>:

Ի տարբերություն Քաղաքացիական օրենսգրքի՝ ՀՀ Քրեական օրենսգրքում զրպարտությունը և վիրավորանքը համապատասխանաբար 135-136 հոդվածներով համարվում են քրեորեն պատժելի արարքներ և բնութագրվում են այսպես.«Ջրպարտությունը՝ ուրիշի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող կամ բարի համբավը արատավորող ակնհայտ սուտ տեղեկություններ տարածելն է: Սույն հոդվածի 2-րդ կետում շարունակվում է. «Ջրպարտությունը, որը դրսևորվում է հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ զանգվածային լրատվության միջոցներով, պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով կամ ուղղիչ աշխատանքներով՝ մեկից երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով»<sup>8</sup>:

Վիրավորանքը, որ ՀՀ Քրեական օրենսգրքի 136 հոդվածի համաձայն բնութագրվում է որպես ուրիշի պատիվն ու արժանապատվությունը անպարկեշտ ձևով ստորացնող արարք, նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից երկուհարյուրապատիկի, չափով, կամ ուղղիչ

<sup>6</sup> ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 19, Երևան, 1998, էջ 13

<sup>7</sup> Д.С. Авраамов, Профессионфдьнфая этика журналиста, Москва, 1999, стр.174

<sup>8</sup> ՀՀ Քրեական օրենսգիրք, հոդված 135, Երևան, 2003թ.,

աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»<sup>9</sup>: Սույն օրենսգրքի 344 հոդվածով էլ կարգավորվում է արդարադատության ներկայացուցիչներին զրպարտելը. «Դատախազին , քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելը՝ կապված նախնական քննություն վարելու, դատարանի դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտերի կատարման հետ՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ մեկից երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»<sup>10</sup>:

Թեև ՀՀ Քրեական օրենսգրքում հստակ են շարադրված զրպարտության և վիրավորանքի դրսևորումները, այնուամենայնիվ սույն օրենսգրքով լրագրողին դատապարտել վերոհիշյալ չարաշահումների համար, ցանկալի չէ: Սակայն այլ է խնդիրը, եթե նմանատիպ դրսևորումների առկայության դեպքում լրագրողը կամ լրատվամիջոցը պատասխանատվության է ենթարկվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով: Մեկ նկատառում ևս. եթե ամերիկյան դատական պրակտիկայում ընդունված է, որ զրպարտության առկայության ապացուցումը հայցվոր կողմի պարտավորությունն է (առավել խիստ է վերաբերմունքը, եթե հայցվորը պետական պաշտոնյա է, օր. Սալիվանի դեպքում), այլ ոչ թե լրատվամիջոցին կամ լրագրողին, ապա մեր իրականությունում հենց լրագրողը կամ լրատվամիջոցն է պատասխանատու ապացույցներ ներկայացնելու համար (ասվածի մասին օրինակներ շատ կան):

Իմաստային առումով զրպարտության մասին բնութագրումները միանշանակորեն նույնն են տարբեր երկրների իրավական փաստաթղթերում: Թերևս միայն Կանադան է, որ տարբերակում է զրպարտության երկու տեսակ՝ գրավոր զրպարտություն (libel) և բանավոր զրպարտություն (slander):<sup>11</sup>

Ջանգվածային լրատվության միջոցներից յուրաքանչյուրում զրպարտության որ տեսակն էլ նկատելի լինի, լրագրողը պատասխանատվություն չի կրում հատկապես այն դեպքերի համար, եթե տեղեկատվությունը տրամադրել են ինչպես պետական պաշտոնյաները (լրագրողը պարզապես վերարտադրող է, ուստի պետք է նշի տեղեկատվության աղբյուրը), այնպես էլ լրատվական տարբեր գործակալություններն ու զանգվածային լրատվության միջոցները:

<sup>9</sup> նույն տեղում, էջ 56

<sup>10</sup> նույն տեղում, էջ 225

<sup>11</sup> В. Н. Базылев, Ю. А. Бельчиков, А. А. Леонтьев, Ю. А. Сорокин, Предварительские материалы по исследовательской теме, Оскорбление и ненормативность в текстах средств массовой информации, Мпсква, 1999г., стр.12

Էթիկայի տեսանկյունից հատուկ դժվարություն է ներկայացնում հերոսին գնահատելը: Խոսքը հատկապես այն դեպքերի մասին է, երբ ենթադրյալ անձը մեղադրվում է ինչ-որ արարքի մեջ: Այս դեպքում լրագրողը չի կարող մեղադրյալ անվանել մեկին, քանի դեռ չի ապացուցվել նրա մեղքը: Ավելին, «Նախաքննության կամ հետաքննության տվյալների հրապարակումը, առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության, պատժվում է մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանքով»<sup>12</sup>, - ասվում է ՀՀ Քրեական օրենսգրքի 199 հոդվածում: Շատ տեսաբաններ այս պարագայում համամիտ են, որ երբ լրագրողն սկսում է քննադատել ու ներկայացնել մարդու արարքները, նրա ներքին հուզումները, ցանկալի է, որ նա փոխի իր հերոսի անունը: Ըստ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 8-րդ հոդվածի՝ կասկածյալների, մեղադրյալների, դատապարտվածների կամ քրեական դատավարության մասնակից այլ կողմերի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելիս պետք է հարգել մասնավոր կյանքի պաշտպանության իրավունքը: Հատկապես պետք է պաշտպանված լինեն անչափահասները կամ այլ խոցելի անձինք, ինչպես նաև տուժածները, վկաները, և կասկածյալները, մեղադրյալների ու դատապարտվածների ընտանիքները: Ցանկացած պարագայում պետք է հաշվի առնել վերոնշյալ անձանց ինքնության բացահայտմանը նպաստող տեղեկությունների վնասակար ազդեցությունը»<sup>13</sup>:

Էթիկայի կոպիտ խախտում է համարվում նաև գրագողությունը, այլ կերպ ասած՝ ուրիշի սեփական մտքերն ու գաղափարները յուրացնելը, իր իսկ անձին վերագրելը: Այս պարագայում ևս դատական հայցերն անխուսափելի են: Հայցվոր կողմը դատարանի միջնորդությամբ կարող է լրագրողից կամ համապատասխան լրատվամիջոցից պահանջել վնասի փոխհատուցում:

Գրագողությունը կամ հեղինակային իրավունքի խախտումը նույնպես համարվում է քրեորեն պատժելի արարք, հետևաբար կարգավորվում է ՀՀ Քրեական օրենսգրքի 158 հոդվածով. «Հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ հեղինակությունը յուրացնելը, եթե այդ արարքը խոշոր վնաս է պատճառել, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»<sup>14</sup>: Լրագրողների՝ նման իրավիճակներում չհայտնվելու միակ պայմանը թերևս տեղեկատվության աղբյուրի վկայակոչումն է:

<sup>12</sup> ՀՀ Քրեական օրենսգրքի, հոդված 199, Երևան, 2003թ., էջ 121.

<sup>13</sup> Իրավական ուղեցույց հեռարձակողների համար, Երևան, 2004թ., էջ 110

<sup>14</sup> Ույն տեղում, էջ 83

Այսպիսով, լրագրողների թույլ տված էթիկական խախտումները հետևանք են մամուլի և խոսքի ազատության չարաշահման, որն իր հերթին մի կողմից կարող է էական վնաս հասցնել հասարակությանը, մյուս կողմից էլ՝ հանգեցնել հասարակական հարաբերությունների ապակայունացման և խախտել հասարակության համերաշխությունն ու ներդաշնակությունը: Այդ է պատճառը, որ «Ջանգվածային լրատվության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով» պատասխանատվություն է նախատեսվում լրատվության միջոցի կողմից խոսքի ազատության չարաշահման, իրականությանը չհամապատասխանող, օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտող, անձի պատիվն ու արժանապատվությունը վիրավորող լրատվության հրապարակման համար»<sup>15</sup>: Բայց սա չի նշանակում, որ պետք է ճնշել լրագրողին այնպիսի հրապարակումների համար, որը շահագրգիռ անձինք չէին ցանկանա հասանելի դարձնել հանրությանը:

---

<sup>15</sup> Ջանգվածային լրատվության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, Երևան, 2003թ., էջ 6

## Գրականություն

1. Г.В.Лазутина, Профессиональная этика журналиста, Москва, 2002г., ст.3

2. նույն տեղում, էջ 6

3 .Շ. Դոյդոյան , Սահմանադրությունը մամուլի ազատության երաշխավոր , Երևան 2001թ. , էջ 38

4. ՀՀ տեղեկատվության ազատության մասին օրենքը

5. ՀՀ Սահմանադրություն

6. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Երևան, 1998թ.

7. Д.С.Авраамов, Професиональная этика журналиста, Москва, 1999г., ст. 174

8. ՀՀ Քրեական օրենսգիրք, Երևան, 2003թ.

9. նույն տեղում

10. նույն տեղում

11. В. Н . Базылев, Ю.А. Бельчиков, А. А. Леонтьев, Ю. А. Сорокин, Профессиональные материалы по исследовательской теме ,Оскорбление и ненормативность в текстах средств массовой информации, часть вторая, Москва, 1996г.

12. ՀՀ Քրեական օրենսգիրք, Երևան, 2003թ.

13. Իրավական ուղեցույց հեռարձակողների համար, Երևան, 2004թ.

14. նույն տեղում

15. Ջանգվածային լրատվության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, Երևան, 2003թ.



## Resume

Վարդուհի Պետրոսյան.

Հոդվածը, վերնագրված «Էթիկական դաշտը կարգավորող ՀՀ օրենքները», ներկայացնում է այսօր լրագրողական միջավայրում առկա էթիկական խախտումները, ապա դրանք կարգավորող օրենքները՝ նախատեսված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ Քաղաքացիական և Քրեական օրենսգրքերով, ՀՀ Ձանգվածային լրատվության մասին օրենքներով ու իրավական այլ ակտերով: Հոդվածում տեղ են գտել նաև որոշ համեմատություններ էթիկական դաշտը կարգավորող ռուսական և արևմտյան օրենքների հետ:

Вардуй Петросян.

Статья, озаглавленная <<Законы Республики Армении, регулирующие этическое поле>> представляет этические нарушения сегодняшнего журналистского цеха, а также законы, регулирующие эти нарушения, представленные Конституцией Республики Армении, Законодательствами Гражданского и Уголовного права, Законом о Средствах Массовой Информации Республики Армении и другими правовыми актами.

В статье представлены также некоторые сравнения между российскими и западными законами регулирующими этическое поле журналиста.

Varduhy Petrosyan.

The titled article <<The laws of the Republic of Armenia regulated the ethic`s field>> presents the ethic`s violents of today`s journalists` circle and the laws adjusting them presented by the Constitution of Civil and Criminal laws, by the law of Mass Media of the Republic of Armenia and by the other legal acts. There are also some comparities

In this article between Russian and Western Laws adjusted the ethic`s field.